



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«            » հուլիսի 2019 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-139-17.05.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 797 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱԶԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

(Պ-139-17.05.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

1. Նախագծով առաջարկվող խմբագրությունում կան որոշ անհստակություններ, սակայն ենթադրվում է, որ խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ ռազմական նշանակության ապրանքներն անհատույց մատակարարվում են Հայաստանի Հանրապետությանը (հայկական բանակին), կամ ռազմական նշանակության շրջանակներում աշխատանքներն անհատույց կատարվում են, և ծառայություններն անհատույց մատուցվում են Հայաստանի Հանրապետությանը:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությանը նվիրատվությամբ գույք հանձնելու գործարքներն ԱԱՀ-ով հարկելու խնդիր առհասարակ գոյություն չունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ նվիրատվության ձևով պետությանն ապրանքի մատակարարումն արդեն իսկ ազատված է ԱԱՀ-ից: Ընդ որում, նշենք, որ այս դեպքում Կառավարության կողմից որոշում ընդունվելու անհրաժեշտությունը բացակայում է, հետևաբար առկա չեն նախագծի հիմնավորմամբ ներկայացված՝ Կառավարության որոշումը նախապատրաստելու և ընդունելու հետ կապված ընթացակարգային խնդիրները:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության համար բարերարների կողմից անհատույց կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները ԱԱՀ-ից ազատելու առաջարկությանը, ապա այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նշյալ գործարքներն ԱԱՀ-ից ազատելու հնարավորություններ նույնպես նախատեսված են Օրենսգրքով: Մասնավորապես, Օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ, իսկ իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ստացման ենթակա հատուցման գումարը՝ առանց ԱԱՀ-ին:

Մյուս կողմից, եթե նախագծի հիմնավորմամբ ներկայացված միակ խնդիրը կայանում է նրանում, որ Կառավարության համապատասխան որոշման ընդունման հետ կապված առկա են ընթացակարգային խնդիրներ, ապա գտնում ենք, որ խիստ անհրաժեշտության դեպքերում Կառավարության համապատասխան որոշումը գործնականում

հնարավոր է պատրաստել և ընդունել սովորաբար այդ գործընթացի վրա ծախսվող ժամանակից էականորեն ավելի կարճ ժամկետներում: Հետևաբար, գտնում ենք, որ Կառավարության համապատասխան որոշման ընդունման գործընթացի ժամանակատարությունը ԱԱՀ-ից ազատման նման արտոնություն տրամադրելու բավարար հիմք չէ:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ խոսքը մատուցվող ծառայությունների և կատարվող աշխատանքների մասին է, որոնց դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչ չափանիշների հիման վրա է մատուցվող ծառայությունը կամ կատարվող աշխատանքը համարվելու ռազմական բնույթի: Մինչդեռ, Օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված ընթացակարգի կիրառության դեպքում վերոնշյալ խնդիրն այլևս էական չի լինի:

2. Բացի վերոնշյալը, հայտնում ենք, որ Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում է օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական, բարեգործական, կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների ներմուծումը, ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև նույն կետի համաձայն, ԱԱՀ-ից ազատվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակները որոշում է Կառավարության լիազոր մարմինը: Հետևաբար, բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող և պետությանը հանձնվող ապրանքների մասով ԱԱՀ չվճարելու խնդիրը կարող է լուծվել նաև գործող օրենսդրությամբ սահմանված այս հնարավորության շրջանակներում:

3. Գործող օրենսդրությամբ սահմանված են բավարար կարգավորումներ, որպեսզի Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) և նվիրատվությամբ պետությանը հանձնվող ապրանքների ներմուծման մաքսային վճարների բեռը նույնպես չընկնի բարերարների վրա: Մասնավորապես՝

1) «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 18-րդ հավելվածով սահմանված՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի և դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին» արձանագրության համաձայն՝ ԵՏՄ անդամ մի պետություններից մյուս անդամ պետություն ապրանքների ներմուծման դեպքում այդ ապրանքների ներմուծման համար ազգային օրենսդրությամբ սահմանված անուղղակի հարկերը հաշվարկվում և վճարվում են այն անձանց կողմից, որոնք օժտված են ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքով, կամ որոնց ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը նախատեսվում է պայմանագրով: Վերոգրյալը նշանակում է, որ եթե համապատասխան պայմանագրով նախատեսվի, որ ապրանքների նկատմամբ սեփականությունն անցնում է պետությանը, ի դեմս, օրինակ, ՀՀ պաշտպանության նախարարության, ապա այդ ապրանքների մասով սահմանին վճարման ենթակա հարկային պարտավորությունների բեռը, ըստ էության, կկրի պետական բյուջեն:

2) ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող ապրանքների մասով բավարար է, որպեսզի այդ ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը պետությանն անցի մինչև այդ ապրանքների՝ ՀՀ սահմանը հատելը: Այս դեպքում այդ ապրանքների մասով ներմուծող կհամարվի, օրինակ, ՀՀ պաշտպանության նախարարությունը և այդ ապրանքների ներմուծման ժամանակ հաշվարկվող հարկային պարտավորությունների բեռը, ըստ էության, նույնպես կկրի պետական բյուջեն: Բացի այդ, ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող ապրանքների դեպքում կարող է կիրառվել «Հրաժարում՝ հոգուտ պետությանը» մաքսային ընթացակարգը, որը կիրառվում է ԵՏՄ անդամ պետությանն անհատույց հանձնվող ապրանքների նկատմամբ՝ առանց մաքսատուրքի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման:

4. Բացի վերոնշյալը, հայտնում ենք, որ նոր հարկային արտոնությունների տրամադրումը չի բխում ներկա փուլում ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության նպատակադրումից և ուղղություններից: Այս առումով, հարկ է նշել, որ առաջիկա տարիներին հարկային քաղաքականության տեսանկյունից առանձնակի կարևորվելու է գործող հարկային արտոնությունների շրջանակի կրճատումը, հարկման բազայի ընդլայնումը և ամրապնդումը: Բացի այդ, ներկա փուլում ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է ուղղակի հարկերի գծով հարկային բեռը նվազեցնելուն և անուղղակի հարկերի վրա տեղափոխելուն: Հետևաբար, եթե այդուհանդերձ առկա է բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող և

պետությանը հանձնվող ապրանքների մասով ԱԱՀ վճարելու խնդիր, որը հնարավոր չէ կամ նպատակահարմար չէ լուծել գործող օրենսդրությամբ սահմանված վերոնշյալ հնարավորությունների շրջանակներում, ապա այդ խնդիրը կարող է լուծվել նաև ներմուծման ու մատակարարման գործարքներից առաջացող հարկերը պետության համաֆինանսավորմամբ վճարելու ճանապարհով:

Ամփոփելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ներկայացված առաջարկության ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար:

Այդուհանդերձ, նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի 10.1-ին կետի 2-րդ նախադասությունից անհրաժեշտ է հանել «ԱԱՀ-ից ազատվող» բառերը՝ հաշվի առնելով այն, որ «ապրանքը», «աշխատանքը» կամ «ծառայությունը» չեն կարող համարվել ոչ գործարք, ոչ էլ գործառնություն, իսկ ԱԱՀ-ից ազատվում են միայն «ապրանքի մատակարարումը», «աշխատանքի կատարումը», «ծառայության մատուցումը»: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նաև քննարկվող նախադասությունում «շրջանակները» բառը փոխարինել «ցանկերը» բառով:

2. Նախագծով նախատեսվող լրացման հետ կապված՝ 10.1-ին կետի 1-ին նախադասությամբ հասկանալի չէ, թե ինչ է իրենից ներկայացնում «ռազմական նշանակության շրջանակներում ռազմական նշանակության ապրանքների ներմուծումը»: Տվյալ բովանդակությամբ նորմում «ռազմական նշանակության շրջանակներում» արտահայտությունն ավելորդ է: Ուստի, անհրաժեշտ է կամ «բացառապես ռազմական նշանակության շրջանակներում» արտահայտությունը հանել, կամ էլ փոխարինել «բացառապես ռազմական կիրառման համար» բառերով՝ հաշվի առնելով «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի N 1308-Ն որոշման դրույթները:

Բացի այդ, նախագծի 1-ին հոդվածով նախատեսված 10.1-ին կետի առաջին նախադասությամբ խոսքը վերաբերում է ռազմական նշանակության ապրանքներին ընդհանրապես, մինչդեռ դրա երկրորդ նախադասությամբ, որը հղում է կատարում վերոհիշյալ 1-ին նախադասությանը, խոսքը վերաբերում է «բացառապես ռազմական նշանակության ապրանքներին»:

Այս առնչությամբ պետք է նշել նաև, որ հստակ կարգավորում նախատեսելու նպատակով անհրաժեշտ է 1-ին հոդվածով նախատեսված 10.1-ին կետի «և այլ ռազմական

նշանակության ապրանքների» արտահայտությունը «այլ» բառից հետո լրացնել «բացառապես» բառով:

3. Նախագծի 1-ին հոդվածով սահմանված՝ 10.1-ին կետով նախատեսված «բարերար» բառն անհրաժեշտ է փոխարինել «բարեգործ» բառով՝ հաշվի առնելով «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կարգավորումը, որի համաձայն՝ բարեգործներն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք նույն օրենքի 2-րդ հոդվածում նշված նպատակներով բարեգործություն են իրականացնում:



19 հունիսի 2019 թվականի N 797 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ  
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-139-17.05.2019-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 19  
Երևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 10.1 կետով.

««10.1) Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բարերարների կողմից՝ բացառապես ռազմական նշանակության շրջանակներում՝ ռազմական տեխնիկայի, զենքերի վրա տեղադրելու համար նախատեսված հեռադիտակային նշանոցների, տեսահսկման և այլ ռազմական նշանակության ապրանքների ներմուծումը, մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը:»»

Սույն կետով սահմանված, բացառապես ռազմական նշանակության՝ ԱԱՀ-ից ազատվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակները որոշում է Կառավարության լիազոր մարմինը»

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

#### Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրով, ինչպես նաև նմանատիպ՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև միջպետական (միջկառավարական) համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման նկատմամբ ավելացված արժեքի գծով արտոնություններ սահմանված են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության 17.11.2017 ՀՕ-194-Ն օրենքի: Սակայն առ այսօր՝ առանձին բարերարների կողմից Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար, բացառապես ռազմական նշանակության ապրանքների ներմուծման և այդ նպատակների հետ ուղղակիորեն կապված այլ գործարքների նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով արտոնության տրամադրման համար՝ օրենքի ուժով իրավական կարգավորում բացակայում է:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ինչպես նաև ռազմարդյունաբերության զարգացման համար ռազմական նշանակության ապրանքների ներմուծման անհրաժեշտությունը և կարևորությունը՝ խնդիր է առաջանում վերոնշյալ գործարքների համար ավելացված արժեքի հարկի գծով արտոնության տրամադրման համար համապատասխան իրավական դաշտ ապահովել:

#### Առկա իրավիճակը և խնդիրները



Հարկ է նշել, որ 2016թ.-ի ապրիլյան պատերազմի ժամանակ՝ առանձին բարերարների կողմից բացառապես ռազմական նշանակության տեխնիկայի և այլ ապրանքների ներմուծման համար, հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով ներմուծելիս գանձվում էր ԱԱՀ: Հետագայում և առ այսօր նման գործարքներ իրականացնելիս՝ միայն ՀՀ կառավարության որոշմամբ կարող է ԱԱՀ-ից ազատելու արտոնություն տրամադրվել: Բոլոր դեպքերում բացառապես ռազմական նշանակության գործարքները ՀՀ կառավարության կողմից չեն մերժվի, ուղղակի այս գործընթացի պարզեցման, ժամանակային առումով կրճատման և մատչելիության նպատակով է առաջարկվում օրենսդրական փոփոխությունը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է բարենպաստ պայմաններ ստեղծել ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման համար:

### **Ակնկալվող արդյունքը**

Օրենքի ընդունումը հնարավորություն կընձեռի ավելի մատչելի և դյուրին գործողություններով իրականացնել առանձին բարերարների կողմից՝ բացառապես ռազմական նշանակության տեխնիկայի, զենքերի վրա տեղադրելու համար նախատեսված հեռադիտակային նշանոցների, տեսահսկման և այլ ապրանքների ներմուծման գործարքները: Ինչպես նաև, բացառապես այդպիսի գործարքների, օրենքի ուժով կարգավորման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կողմից ԱԱՀ-ի մասով արտոնություն տրամադրելը կընդունվի փոխադարձ հարգանք և վստահություն այդ անձանց նկատմամբ: